# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅԿԹ-Հ — ՀԱՏՈՐ ՀԸ — 1920 ՅՈՒՆԻՍ — Թիւ 6

Ս. ՂԱԶԱՐ


978

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԸ.

Գեղեցիկ էր 1914ի Օգոստոսի առաւօտը, Հայաստան իւր Նաւասարդը պիտի տօնէր սկսելով բարենորոգութեանց գործով՝ Եւրոպական վերաստուգութեան տակ. աւա՜ղ, յանկարծ որոտաց Տեւտոնեան հրետանին, Եւրոպայ ամբողջ եւ աշխարհս իմիասին խառնուեցան իրար։ Դիւական հրետանին, հաշտ եւ զուարթ երկինքին դէմ սպառնական հուր եւ բոց ժայթքելով պղնձի բերնէն, շէն՝ անշէն, գեղ եւ քաղաք՝ անապատի եւ աւերակներու վերածուեցան. ռումբի բարկաճայթ որոտն դժոխքի հիմունքն կը սասանեցնէին. ծաղկափայլ երիտասարդութիւնը, շատ մը ծնողաց յոյսն եւ մխիթարութիւնը, մահու գերանդիէն հնձուած՝ փռուած էին ցրիւ դաշտերու երեսին։ Երկինք, երկիր, օդ եւ ջուր հուր կը շնչէին, կը տեղային տառապեալ մարդկութեան գլխին «*արհաւիրք մեծամեծք յերկնից*. եւ կոծեցան ամենայն ազգք երկրի» Հայերն ամենքից աւելի։ Պատերազմն իւր ահաւոր աղէտներով առաւել քան զկար մեր ծանրացաւ մեր բնաշխարհի վրայ։ Արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ, բարձրացան սարերէն վեր եւ փոխեցին մեր երկիրը խաւար անդունդի, վերածեցին աներեւոյթ եւ անպատրաստ զանգուածի մը, ուսկից Թուրքն էր անցեր. ուր մահու թագաւորութիւնը կը տիրէր։ Մեր երկնքի աստղերը թօթափեցան, սուգ ու շիւան պատեց մեր երկիրը, գերեզմաննոց մ'էր Հայաստանը։

Բիւզանդիոնի մէջ մարդ գազաններն ուրուշեր էին բնաջինջ ընել Հայ ազգը. արեան մէջ խորհեցան խեղդել այն ցեղը որ քառասուն դար ապրել էր փարելով իւր Ազատ լերան լանջերուն, անվախ ու սպիտակ լեռներուն։ Արեան մէջ ուզեցին խեղդել Հայ ժողովուրդը. եւ չյիշեցին թէ արեան հեղեղէն եւ ծով ցաւերու ջրերէն վեր կը բարձրանար Արարատի պաղպաջափայլ գագաթն. Հայ ազգին յոյս Ներշնչողը։

Հոն առանձնացած դարերով կը հսկէր Հայաստանի վեհ Ոգին. այն անմահներու բնակարանն էր, Հայոց դաքիրայն՝ ուր կ'ապ-



digitised by A.R.A.R.@

րէին մեր քաջ նախնեաց ոգիներն։ Թուրքը Հայ մարմինն յօշոտելով, կարծէր հոգին ալ սպաննած ըլլալ. յիմար, չմտածեց որ անոնց աստղաճաճանչ կապոյտ տաճարին գմբէթի շրթունքներն կը համբուրէին Հայոց աշխարհի հորիզոններն, վսեմաբարձ սիւնն ի միջին Ազատն Մասիս։

Աշխարհ ամենայն սարսեց եւ դողաց լսելով Հայոց աղէտները, Հայաստանի անզաւակելը, որ կը նայէր ամենքին աղերսի աչքերով, բայց ոչ ոք ի գութ շարժեցաւ աւազակներու ձեռքէն փրկել վիրաւորը. բայց նա չյուսահատեցաւ, վերստին արծարծեց իր մէջ ապրելու, անպատճառ ապրելու եւ միշտ ապրելու կամքը. սուրբ բարկութիւնը կենդանութիւն տարածեց թուլացած երակներու մէջ. զգաց հոգի եւ կենդանութիւն։

Այրարատեան աշխարհն եղած է Հայոց փառքի օրրանը՝ ուր չմարեցաւ հայրենեաց սիրոյ հուրը, եւ Մասիսն իբրեւ ճրագ մշտավառ, ստրկութեան խաւար դարերու մէջ՝ լուսատու եղաւ Հայկայ Տունին, արժան էր ուրեմն որ համաշխարհաւեր պատերազմի թոհբոհի մէջէն, դարձեալ Այրարատեան աշխարհին բարձրացնէր ազատութեան դրօշն։ Հասեր էր ժամանակն որ Աւագ Մասիսն իւր փոքր եղբօր տուած խոստումն կատարէր.

*Հանց գիտցիր դու այլ իմ փոքր եղբայր.*
*Երբ յետ դարերու առաջին անգամ*
*Ես Աւագ Մասիս Ներսուց որոտամ*
*Կանչեմ ու շընչեմ արձակեմ ծուխ բոց*
*Սասանեցընեմ զԱրարատն Հայոց*
*Այս ընծի նըշան Հայոց աշխարհին*
*Թէ գայ ժամանակ որ գան փառքն այլ հին։*

Մեր հին փառքն՝ էր Ազատ եւ անկախ Հայաստանի Թագաւորութիւնը, երբ իբրեւ ազատ կամքի տէր ազգ մը, մեր հայրենիքի բաղդը տնօրինելը մեր իրաւունքն էր։ Արդարեւ Մասիս կատարեց իւր խոստումը, եւ Հայ բանակը ծնաւ իւր արգանդէն. կանչեց եւ շնչեց, արձակեց ծուխ ու բոց, խորտակեց փշրեց բռնաւորի լուծը, հալածեց քշեց հայրենի հողէն դուրս թշնամւոյ հրոսակախումբերը։ Մեր քաջայաղթ բանակն է սասանեցնողը Թուրք ու Թաթար խուժանը եւ բարձրացնողը Հայի վարկը ու փառքը հանուր ազգերու առջեւ։

Այո՛, սիրելի որդիք մեր, անմահ քաջքդ Հայոց, ձեզմով դարերով մեր խոնարհած ճակատները բարձրացան եւ համարձակ կրնանք նայիլ թէ բարեկամի եւ թէ թըշնամւոյ աչքերուն մէջ։ Անահ, աներկիւղ մահուան դէմ դիմագրաւեցիք այնպէս որպէս թէ հարսանեկան ուրախութեան հրաւիրուէիք, ձեր բարոյական կորովն, հաւասար գործի մեծութեան եւ դժուարութեան, ձեր գիտակցութիւնն, կեանքի եւ մահու կռուի մէջ, ներշնչեց ձեզի աննկուն հայրենասիրութիւնն, որ թողլքած ամեն դաշնակիցներէն եւ բարեկամներէն, կանգնեցաք նահատակք եւ կամաւոր զոհք նուիրեցիք զձեզ Հայրենիքի ազատութեան համար։ Կեցցէ՛ք, կանաչ արեւ ապրիք։ Երկրորդ տարելիցն է մեր ազատութեան, Հայութեան միտքը, սիրտը եւ սէրը ուղղուած է դէպ ի Հայկական Հանրապետութիւնը, Հայ ազգի Տունը, հրաշակերտ ծնունդ մը Հայ հանճարին, Հայ կամքին, Հայ սիրոյն։ Օրհնեալ են անոր հիմնադիրները, կազմակերպողները, Վարիչները. Նոքա Հայկական Ամենադիւցաի տաճարի փառքը պիտի կազմեն,

*Եւ դուք կարիճ սիրուն ԶՕՐԱԿԱՆՔ*
*Կրակաթափ Թուրք, մահացան բազուկք,*
*ՔԱՂՑՐ ՀԱՑՐԵՆԵԱՑ ՊԱՐԻՍՊՔ ԵՒ ՊԱՀԱՆԳՔ,*
*Ձեր քիրտն ու արիւն անմահ անմոռցուկք.*

Հայաստանի օրուան յիշատակներով խանդավառուած Հանդրին մենաւոր ափունքէն, Մխիթար Սեբաստացւոյ Սեմէն կ'ուղարկենք Հայաստանի ազատ ժողովուրդին եւ դիւցազարմ բանակին մեր ողջոյնները, մեր խնդակցութիւնը մեր աղօթից օժանդակութիւնը. մինչեւ որ Հայ ազգը հասնի իւր սուրբ նպատակին, եւ ձեռք բերէ ամբողջական Անկախ եւ Ազատ Հայաստանը։

ՄԵՂՐՈՒ ՇԻՐԱԿԱՑ

digitised by A.R.A.R.@